ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 54

ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Զառիթափ համայնքի ավագանու 2020թ-ի դեկտեմբերի 22-ի թիվ 9 նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի ավագանու 2020թ. թիվ 9 նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Զառիթափ համայնքի ավագանու՝ 11,11,2020թ. թիվ 53-Ն որոշումը անվավեր ճանաչելու և 31,01,2019թ. թիվ 13-Ն որոշմամբ հաստատված հավելվածում լրացում կատարելու մասին:
3. Զառիթափ համայնքի Սարավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին

Կողմ - 5 Դեմ - 0 Ձեռնպահ – 0

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

ՍՄԲԱՏ ԱՍԼԱՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԳԻՇՏԻ ԲԱԲԱՅԱՆ

ՎԻՐԱԲ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳԱՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ԲՆ.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 55-Ա

ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 53-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2019Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 13-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով և 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով. **ավագանին որոշում է**

1, Անվավեր ճանաչել 11,11,,2020թ. թիվ 53-Ն որոշումը:

2, Զառիթափ համայնքի ավագանու 2019թ. հունվարի 31-ի թիվ 13-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Զառիթափ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետի բովանդակությունը նոր խմբագրությամբ.
<<Համայնքի ավագանին սույն կարգով նշված անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց, բացառությամբ սույն կարգի 18.2-րդ կետով սահմանված դեպքերի, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր խնդրի լուծման հարցը քննարկում է միայն սույն կարգի 13-րդ կետում նշված սոցիալական օգնության տրամադրման հանձնաժողովի եզրակացության դեպքում և քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր խնդրի լուծման իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ, իսկ 18.1 կետով նախատեսված աջակցությունը տրամադրվում է համայնքի ղեկավարի որոշման հիման վրա>>:
3, 18-րդ կետից հետո լրացնել նոր 18.1 կետ հետևյալ բովանդակությամբ.
ա/<<Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրության ժամանակ պատերազմական իրավիճակների դեպքում մարտական գործողություններին մասնակցած զոհված զինծառայողների ընտանիքներին տրամադրել միանվագ դրամական աջակցություն՝ 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:

բ/Վիրավոր զինծառայողների ընտանիքներին տրամադրել միանվագ դրամական աջակցություն՝ 100000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ:
գ/Անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին տրամադրել միանվագ դրամական աջակցություն՝ 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ փուլային տարբերակով՝ 100,000 դրամը տրամադրել նախապես, իսկ մնացած 200,000 դրամը՝ զինծառայողի կարգավիճակը հստակեցվելու /զոհված, անհայտ կորած կամ գերի ճանաչվելու/ հանգամանքը հաստատվելուց և համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում:

Կողմ - 5 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

ՍՄԲԱՏ ԱՍԼԱՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԳԻՇՏԻ ԲԱԲԱՅԱՆ

ՎԻՐԱԲ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳԱՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 56

ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության ,,Քաղաքաշինության մասին,, օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի ,,Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմելու կարգը հաստատելու մասին, թիվ 1918 որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001թ-ի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> անդամների 10,12,2020թ. թիվ 157 և 10,12,2020թ. թիվ 159 դրական եզրակացությունները,
ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Զառիթափ համայնքի Սարավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 3.10343 հա խոտհարքը /կադաստրային ծածկագիր՝ 10-039-0307-0077/ և 3.10013 հա խոտհարքը /կադաստրային ծածկագիր՝ 10-039-0307-0076/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, էներգետիկայի հողեր գործառնական նշանակության՝ արևային ֆոտովոլտային կայան կառուցելու համար:
ա/ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի

8-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջարկել սեփականատիրոջը եռամսյա ժամկետում համայնքային բյուջե վճարել սույն որոշման 2-րդ կետում նշված հողամասերի կադաստրային արժեքների ՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 5955418/հինգ միլիոն ինը հարյուր հիսունհինգ հազար չորս հարյուր տասնութ/՝ /2979293+2976125/ՀՀ դրամ:

2.Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Զառիթափ համայնքի Սարավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող ,,ԱՐԵԳ ԷՆԵՐԳԻԱ,, ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 19,11 հա գյուղատնտեսական նշանակության հողերից 3,57667 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-039-0304-0120-ից/, 0,03099 հա /կադաստրային ծածկագիր՝10-039-0306-0022-ից/, 0,15349 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-039-0306-0022-ից, 0,06 հա /կադաստրային ծածկագիր՝10-039-0306-0022-ից, 2,60613 հա /կադաստրային ծածկագիր՝10-039-0306-0022-ից, 0,05203 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-039-0306-0022-ից, 0,86912 հա /կադաստրային ծածկագիր10-039-0306-0022-ից, 0,16 հա /կադաստրային ծածկագիր՝10-039-0304-0118/ գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության արոտավայրեր հողատեսքերը և 0.31 հա /ծածկագիր 10-039-0304-0117/ գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության այլ հողատեսքերը /ընդամենը՝ 7,81843 հա/ ՝ սույն որոշմանը կից հատակագծերին համապատասխան փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, էներգետիկայի հողեր գործառնական նշանակության՝ արևային ֆոտովոլտային կայան կառուցելու համար:

ա/ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջարկել ,,ԱՐԵԳ ԷՆԵՐԳԻԱ,, ՍՊԸ-ին եռամսյա ժամկետում համայնքային բյուջե վճարել սույն որոշման 2-րդ կետում նշված հողամասերի կադաստրային արժեքների ՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 8741061,23 /ութ միլիոն յոթ հարյուր քառասունմեկ հազար վաթսունմեկ ամբողջ քսաներեք հարյուրերորդական/ ՀՀ դրամ:
բ/ 19,11 հա-ից մնացած 11,29157 հա փոփոխության հարցին անդրադառնալ նոր ներդրումային ծրագիր ներկայացնելուց հետո:
3,Սույն որոշման 1-ին կետի ա/ ենթակետով և 2-րդ կետի ա/ ենթակետով սահմանված ժամկետում և սահմանված արժեքները համայնքային բյուջե չվճարելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
4,Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործողություններ:

5, Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 5 Դեմ - 0 Ձեռնպահ – 0

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

ՍՄԲԱՏ ԱՍԼԱՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԳԻՇՏԻ ԲԱԲԱՅԱՆ

ՎԻՐԱԲ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ՍԱՍՈՒՆՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳԱՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ